

**ՀԱՄԱՅՆ ՎՐԱՅ ՊԱՏՌԻԱՌՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԼՔԻՍԵԴԵԿ Գ-Ի ՄԱՀԸ**



Հունվարի 10-ին, Թբիլիսիում, իր մահկանացուն կնքեց Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս ծերունազարդ Մելքիսեդեկ Գ-ը, 88-ամյա հասակում։ Սպի մեջ մտավ Վրաց Եկեղեցին։

Ամենայն Հայոց Հայրապետը ցավակցական հեռագիր ուղարկեց՝ բաժանելով Վրաց

Եկեղեցու վիշտը, և պատվիրակություն նշանակեց թաղման մասնակցելու։

Նորին Սրբություն Մելքիսեդեկ Գ-ը ծնվել է 1872 թվականին Գանտառուրա գյուղում։ Ավարտել է Կազմանի Հոգևոր ակադեմիան 1900 թվականին։ Ուսուցչություն է արել Քութայիսի, Սմոլենսկի, Կամենեց քաղաքների Հոգևոր

սեմինարիաներում: Երկար ժամանակ պաշտոնավարել է որպես հոգեգործ հովիպ:

1925 թվականին ձեռքուր հովիպ է հայութապուղարք Սովորումին. 1952 թվականին, երջանկահիշատակ Կալիստրատ Կաթողիկոս-Պատրիարքի վախճանումից հետո, նույն թվականին ապրիլ ամսվա 5-ին ընտրվում է Համայնքայի վրաց Պատրիարք-Կաթողիկոս: Չնայած իր 80-ամյա տարիքին, նա իր ընտրությամբ իր վրա դրված ծանր ու դժվարին լուծը Աստուծո օգնականությամբ տարավ հավատարմորեն, արդյունավորությամբ և մեծ ձեռնհասությամբ ղեկավարելով իրեն հանձնված բանավոր հոտը 8 տարի, տարիներ, որոնք լուսավոր են մնալու վրաց Եկեղեցու տարեգրության մեջ:

Մելքիսեդեկ գ Կաթողիկոս-Պատրիարքը եղել է խաղաղության շերմ պաշտպան, ընտրվել է Վրացական ՍՍՌ և Սովետական Միության խաղաղության պաշտպանության կոմիտեի անդամ:

Հանգուցյալը բարեկամական ամենաշերմ զգացմունքներով էր կապվել ամենայն հայոց Մայր Աթոռ Ս. էջմիածնին և անձամբ Վեհափառ Հայրապետին, որին սիրում էր և հարգում մեծ սիրով:

1957 թվականի հունիսի 6-ին, հանգուցյալի հրավերով, Վեհափառ Հայրապետը այցելեց Թիֆլիսի և նույն թվականի հոկտեմբերին Համայնքայի վրաց Կաթողիկոս-Պատրիարք Մելքիսեդեկ Գ-ը փոխադարձ այցելություններն արտահայտում էին երկու քույր Եկեղեցիների և եղբայրական ժողովուրդների փոխադարձ սերն ու անքակտելի բարեկամությունը:

Նորին Սրբությունը Ս. էջմիածնում եղած ժամանակ, Մայր Աթոռի միաբանությունը մոտիկից ծանոթացավ ալեզարդ Հայրապետի մաքուր և սուրբ ոգուն, տեսավ, թե նա ինչպիսի սեր և սիրալիր վերաբերմունք ունի հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու նկատմամբ:

Համայնքայի վրաց Պատրիարք-Կաթողիկոս Մելքիսեդեկ Գ-ի թաղման արարողության մասնակցելու համար Վեհափառ Հայրապետի անունից կազմվեց հատուկ պատգամավորություն: Պատգամավորությանը գլխավորում էր Մայր Տաճարի լուսարարապետ գերազանորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, և որի կազմի մեջ էին մըտնում Վրաստանի հայոց թեմի առաջնորդ գերազանորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Մովիկանյանը, թեմական խորհրդի անդամներ պր. Սովորեն Ավշյանը, պր. Սամվել Խաչանյանը, պր. Խնդիր Դիլարյանը և արքա-

նապատիվ Տ. Ռուբեն քահանա Մարտիրոսյանը: Խոկ Մայր Աթոռից գերազանորհ Տ. Ս. Մահակ արքեպիսկոպոսին ուղեկցում էին նաև բարեշնորհ Կարապետ սարկավագ Բենիայնը և բարեշնորհ Մանդրո սարկավագ Բենիայնը:

Պատգամավորությունը Ս. էջմիածնից ճանապարհվեց Հունվարի 15-ին և 16-ին հասավ Թիֆլիսի: Կայարանում պատգամավորությանը դիմավորեց Քութայիսիի եպիսկոպոս Նաումը, պատրիարքարանի քարտուղար քահանան հոր ուղեկցությամբ: Դիմավորելու էին եկել նաև արժանապատիվ Տ. Ռուբեն և արժանապատիվ Տ. Զարեհ քահանաները: Տ. Ս. Մահակ պարբերությամբ կայուղ առաջնորդարանը, ապա վրաց Ս. Սիոն դարավոր ու պատմական տաճարը, ուր դրված էր հանգուցյալ Հայրապետի դագաղը:

Դագաղի վրա դրվեց Վեհափառ Հայրապետի ուղարկած ծաղկեպակի զարդարված հայկական խաչով:

Գերազանորհ Տ. Ս. Սահակ արքեպիսկոպոսը վրաց Կաթողիկոսության նորութիւր տեղապահ Տ. Եփրեմ միտրոպոլիտին հայտնեց Վեհափառ Հայրապետի և Հայ Եկեղեցու ցավակցությունը, որից հետո Հայոց Եկեղեցու պատգամավորությունը ուղեկցությունը կատարվեց Հայոց Եկեղեցին գգեստավորությունով կատարվեց Հայոց Եկեղեցու տաճարը:

Հայորդ օրը, Հունվարի 17-ին, հանգուցյալ Հայրապետի թաղման օրն էր: Հայոց Եկեղեցու կատարվեց Հոգեհանգիստ, որից հետո էջմիածնի պատգամավորությունը ուղեկցությունը դիմավոր վրաց Ս. Սիոն Եկեղեցին, ուր պատարագ էր մատուցում կաթողիկոսության տեղապահ ամենապատիվ Տ. Եփրեմ միտրոպոլիտը: Պատարագին ներկա էր Համայնքությունը Սովորի Պատրիարք Տորին Սրբություն Ալեքսիի պատգամավորությունը՝ Լվովի արքեպիսկոպոս Պալլապի գլխավորությամբ: Ռուս Պորվուուակ Եկեղեցու պատգամամավորության մեջ էին գտնվում նաև Զերնիկովսկի արքեպիսկոպոսը Տ. Անդրեյը, Տ. Նիկողոս Վարդապետը և ուրիշներ: Ներկա էր նաև Դամասկոսի Պատրիարքարանի ներկայացուցիչ Կասիլի եպիսկոպոսը՝ ընկերակցությամբ Ալեքսի Արդեկի-Քերիմ արքեղայի: Ներկա էին նաև Վրաց Եկեղեցու միտրոպոլիտներ, եպիսկոպուներ, վարդապետներ, քահանաներ, սարկավագներ և դպիրներ, որոնք բոլորը զգեստավորված՝ մասնակցում էին սուրբ պատարագին: Ներկա էին նաև Կաթողիկ Համայնքի պետ Հայր Էմմանուիլ Վարդիձեն, Հրեական և մուտումանական Համայնքների ներկայացուցիչներ:

Սուրբ պատարագից հետո սկսվում է հանգուցյալ Կաթողիկոսի թաղման արարողու-

թյունը, Գագաղի վրա կվովի արքեպիսկոպոս գերազնորհ Տ. Պալլաղին հուզիչ դամբանական է արտասանում՝ Հայտնելով Ռուսաց Եկեղեցու ցավակցությունը Վրաց Եկեղեցուն, միաժամանակ վեր հանելով հանգուցյալ Կաթողիկոսի կատարած Հայրենասիրական և խաղաղասիրական գործունեությունը:

Ապա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, Հայ Եկեղեցու և պատգամավորության անոնից ցավակցության խոսք ասաց Տ. Սահակ արքեպիսկոպոսը: Դամբանական ճառեր արտասանեցին նաև միտրոպոլիտ Դիմիտրին, Դավիթ եպիսկոպոսը, Վասիլի եպիսկոպոսը և Հրեական Համայնքի պետ Խորայել Արոնովիչ Բանալիկաշվիլին:

Ապա բոլոր հոգևորականները վերջին հրաժեշտը տվեցին՝ Համբուրելով Հանգուցյալ Պատրիարք-Կաթողիկոսի Աջը:

Ժամը 5-ին հանգուցյալի դագաղը տաճարից դուստ բերվեց և ըստ Վրաց Եկեղեցու սովորության՝ պատեցվեց տաճարի շուրջը մեծահանդես թափորով: Դուրսը լի էր բազմահազար ժողովով, որոնք եկել էին իրենց վերջին հրաժեշտը տալու հանգուցյալ սիրելի Հայրապետին: Տաճարի շուրջ մեկ պտույտ

կատարելուց հետո դագաղը ներս տարվեց, ուր փորձած էր հանգուցյալի գերեզմանը:

Հուզիչ էր թաղման տեսարանը. ոչ ևս է այլևս բոլորից սիրված ու հարգված վրաց հավատացյալ ժողովրդի Հայրը, Վրաց Եկեղեցու Հովվապետ Մելքիսեդեկ Գ-ը:

Թաղումից հետո արվեց հոգեճաշ, երեկոյան ժամը 6.30-ին: Հոգեճաշի ընթացքում հանգուցյալի հիշատակը ոգեկոչեցին Տ. Պալլաղի արքեպիսկոպոսը, Տ. Եկրեմ Միտրոպոլիտը, Տ. Սահակ արքեպիսկոպոսը, Տ. Կոմիտաս եպիսկոպոսը, Տ. Դիմիտրի միտրոպոլիտը և ուրիշներ:

Հոգեճաշից հետո Հայ Եկեղեցու պատգամավորությունը հրաժեշտ տվեց կաթողիկոսական տեղապահ Տ. Եկրեմ միտրոպոլիտին, և Վրաց բարձրաստիճան Հոգևորականներին, մի անգամ ևս Հայտնելով իր խորունգ ցավակցությունը Վրաց Եկեղեցու մեծ կորստի առթիվ:

Հանգիստ երշանկահիշատակ Հայրապետի նշխարներին:

Տա՛ Աստված, որ շուտով վերանա սգո և քողը Վրաց Աթոռից և այն ունենա իր արձանավոր նոր Գահակալը:

